

ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ ՏՔԹ. ԶԱԽԵՆ ԵԿԱԻԵԱՆԻ

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժնի վարիչ Տնօրէն ՏՔ. Զաւէն Եկաւեան, դէպի Միջին Արեւելք՝ Լիբանանի եւ Սուրիոյ Հայկական հաստատութեանց պաշտօնական իր այցելութեան առիթով, Յորդանան եւս այցելեց Օգոստոս 18-20, երկուշաբթիէն Զորեշաբթի օրերուն:

Յորդանանի մէջ Պատրիարքի Փոխանորդ Գեր. Տ. Վահան Արք. Թօփալեանի կարգադրութեամբ, Մեծարգոյ ՏՔ. Զաւէն Եկաւեան հիւրասիրուեցաւ Ամմանի Մարիօք պանդոկին մէջ, Հալէպէն իրեն ընկերացող, կենսաբան ՏՔ. Արմէն Գասպարեանի հետ միասին:

Երկուշաբթի գիշեր, հիւրերուն հետ հանդիպում եւ ընթրիք ունեցան երուսաղէմէն ժամանած Պատրիարք Սրբազան Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Նուրիան Արք. Մանուկեան, Ելեւստից Դիւանի Տեսուչ Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, եւ Պատրիարքի Փոխանորդ Գեր. Տ. Վահան Արք. Թօփալեան, անդրադառնալով այն բոլոր նպաստներուն որ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը ընծայած է Պատրիարքութեան սահմաններուն մէջ գործող հաստատութեանց, կրթարաններու, մատենադարանին, դպրոցական բօշակներուն, եւ Յորդանանի պետական մասնագիտական ուսմանց:

Երեքշաբթի ցերեկին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Լուսարարապետ Նուրիան Սրբազան մտերմիկ խօսակցութիւն ունեցան ՏՔ. Զաւէն Եկաւեանին հետ, խորհրդակցելով Պատրիարքութեան կացութեան մասին,

նկատի առած Յորդանանի, Պաղեստինի եւ Իսրայէլի մէջ մեր ժողովուրդին նուազումը, կրթարաններուն եւ Սուրբ Տեղեաց կարիքները եւ անոնց հոգատարութեան հարցերը: Պատրիարք Սրբազան մասնաւորաբար ներկայացուց Պատրիարքարանի Գալուստ Կիւլպէնկեան մատենադարանի շէնքին վերանորոգման եւ վերակազմակերպման համար անհրաժեշտ երկրորդ ծրագիրները որոնց գրաւոր տուեալները յանձնեց ՏՔ. Եկաւեանի նկատածման:

Գեր. Տ. Վահան Արք. Թօփալեանի եւ Գեր. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի առաջնորդութեամբ, հիւրերը այցելեցին Ս. Թադէոս Եկեղեցին եւ Իզպաշեան-Կիւլպէնկեան Հայկական վարժարանը, եւ տեղեկացան Յորդանանի մէջ տեղի ունեցող կրօնական եւ կրթական աշխատանքներուն:

Նոյն երեկոյին, տեղի ունեցաւ մեծարանքի հիւրասիրութիւնը, պանդոկի սրահներէն մէկուն մէջ, ի պատիւ ՏՔ. Զաւէն Եկաւեանի եւ նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Հրաւիրեալներու մէջ էին Յորդանանի պետական երեսփոխանական ժողովի անդամներ, կրթական մշակներ, եւ ընկերային եւ մշակութային ծառայութեանց նուիրեալ անձնաւորութիւններ:

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հանրօգուտ նպատակներու եւ Հայկական բաժնի Տնօրէնի ծրագրան գործունէութեանց մասին գնահատանքի արտայայտութիւններ ունեցան, Արաբերէնով՝ Տիար Աւետիս Սերփէֆեան, եւ հայերէնով Տիար Ներսէս Ներսէսեան:

Ապա, Պատրիարք Սրբազանը, Անգլիերենով՝ անդրադարձաւ Գալուստ Կիւլպէնկեանի անձին եւ իր հաստատած Հիմնարկութեան բազմադիւն ծառայութեանց, եւ մասնաւորաբար Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան հանդէպ ցուցաբերած հոգատարութեան, 1929 թուականէն սկսեալ, երբ Եղիշէ Պատրիարք Դուրեանի ֆահանայական ձեռնադրութեան առիթով հիմքերը դրուեցան Գալուստ Կիւլպէնկեան մատենադարանին: Եւ գնահատելով Հայկական քաժանմունքի Վարիչ Տնօրէն Տֆթ. Զաւէն Եկաւեանի 20ամեայ անխնայ եւ նուիրեալ ծառայութիւնը, իրեն օգնական ունենալով մասնաւորապէս Հայ դպրոցներու օժանդակութեան պատասխանատու Օր. Աստղիկ Զամֆէրթընը (որ դժբախտաբար

անձնապէս ներկայ չէր), Պատրիարք Սրբազան զանոնք պարգեւատրեց Պատրիարքութիւն Հայոց, Երուսաղէմ, «Սուրբ Յակոբայ» շքանշանով:

Տֆթ. Զաւէն Եկաւեան ընդունելով շքանշանը, շնորհակալութիւն յայտնեց իրեն հանդէպ ցոյց տրուած մեծաբանքին համար, որ զինք եւ իր գործակիցները պիտի մղէ հաւատարմօրէն իրագործելու հիմնարկութեան կրթական, մշակութային, եւ ազգօգուտ նպատակները: Երախտագիտութեամբ յիշեց Յորդանանի արքայական ընտանիքի մարդասիրական վերաբերմունքը հանդէպ Հայկական Եղեռնէն վերապրած գաղթական հայերուն, որոնց սերունդները ներկայիս հաւատարիմ ֆաղաֆաղներն են իրենց որդեգրած հայրենիքին:

Ի.Մ.